



Universala Esperanto-Asocio

en oficialaj rilatoj kun UN kaj Unesko

Nieuwe Binnenweg 176, 3015 BJ Rotterdam, Nederlando

☎ +31 10 436 10 44 📠 +31 10 436 17 51 📧 uea@co.uea.org

Էսպերանտոն մինչ 2009-01-30

Վերջին ժամանակներս Էսպերանտո միջազգային լեզուն ավելի հաճախ է հայտնվում հասարակության լայն շրջանակների ուշադրության կենտրոնում, հատկապես ազգային փոքրամասնությունների իրավունքների և լեզվական ու մշակութային բազմազանության հեռանկարներում: Միջազգային ոչ կառավարական կազմակերպությունները համառոտ են պնդում, որ միջազգային լեզվի հարցը ՄԱԿ-ի և Եվրապայական տնտեսական օրակարգի մեջ մտցվի: Օրինակ՝ 1996 թ. հուլիսին Պրահայի միջազգային գիտաժողովում, անկախ փորձագետների խումբը վերլուծել է Էսպերանտոյի ներկա վիճակը և կոչ է արել դիտարկել այն լեզվական իրավունքների և լեզվաքաղաքականության մտքերի փոխանակության ընթացքում: Պրահայի Մանիֆեստը՝ Էսպերանտո շարժման նպատակների և սկզբունքների ժամանակակից հռչակագիր է, որը հատուկ ուշադրություն է դարձնում լեզվական ժողովրդավարությանը և լեզուների բազմազանության պահպանմանը: 1998 թ.-ին Համաշխարհային Էսպերանտո ասոցիացիան (UEA) ժնկում մարդու իրավունքների Գերագույն կոմիտեի հովանու ներքո անցկացրել է գիտաժողով՝ նվիրված լեզվին և մարդու իրավունքներին, իսկ Եվրոպայում՝ լեզուների տարվա հետ կապված, ամբողջ 2001 թ. ընթացքում Էսպերանտոյի թեմատիկական բարձրացվել է միջազգային մի շարք համաժողովներում: Էսպերանտոյի նախաձեռնողի՝ Չամենհոֆի (1859-1917) 150-ամյա հոբելյանը սկսվել է 2008թ. դեկտեմբերին ՅՈՒՆԵՍԿՕ-ի նստավայրում կայացած գիտաժողովով և իր գագաթնակետին է հասել Էսպերանտոյի միջազգային կոնգրեսում, որը կայացել է 2009 թ.-ին նրա ծննդավայրում՝ Լեհաստանի Բելեստոկ քաղաքում, և ավարտվել է Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի դիվանագետների մասնակցությամբ կայացած գիտաժողովում: UEA-ն պարբերաբար խաղաղության Նոբելյան մրցանակի թեկնածու է առաջադրվում, ի դեպ, նաև 2009 թ. Լեհաստանի խորհրդարանի կողմից: Մոնոլոգիայի Էսպերանտո ընկերությունը դարձավ UEA-ի 70-րդ անդամ երկիրը: 20 աֆրիկյան երկրներում գործում են Էսպերանտո միություններ: Գերմանիայի Հերզբերգ քաղաքը հռչակվել է «Էսպերանտո քաղաք»: Նորությունների վերնագրերում հաճախ հիշատակվում են Էսպերանտոյի այնպիսի կողմնակիցների անուններ, ինչպիսիք են տնտեսագիտության Նոբելյան մրցանակակիր (1994թ.) Ռայնհարդ Չելտենը, շախմատի աշխարհի չեմպիոնուհի (1996 թ.) Ժուժա Պոլգարը, հայտնի ֆանտաստ Հարրի Հարրիսոնը և այլք: «Wikipedia»-ի Էսպերանտո տարբերակը ներառում է մոտավորապես 130 հազար հոդվածներ՝ ըստ 2010 թ.-ի տվյալների: Թեև Էսպերանտոյի բնագրային գրականությանը նվիրված անգլերեն նոր հանրագիտարանը բաղկացած է 700 էջից, այնուամենայնիվ այն համարվում է համառոտ հանրագիտարան:

Օագուճը և նպատակները: Միջազգային ծրագրային լեզվի գաղափարը ամենևին էլ նորություն չէ: Դեռևս հին աշխարհի փիլիսոփա Պլատոնը ասել է, որ աստվածները մեծ շնորհ արած կլինեին մարդկությանը՝ նվիրելով նրան ընդհանուր լեզու: XVI-XVII դարերում մի շարք ականավոր գործիչներ՝ Թոմաս Մորը, Կամպանելան, Ֆրենսիս Բեկոնը, Ռենե Դեկարտը, Իսահակ Նյուտոնը, փորձել են լուծել միջազգային օժանդակ լեզվի խնդիրը:

Վերջին 300 տարիների ընթացքում ի հայտ են եկել մոտ 900 արհեստական լեզուների նախագծեր, սակայն դրանցից ոչ մեկը կյանքի չի կոչվել: Եվ ահա այդ լեզուներից ամենակատարյալը դարձավ Էսպերանտոն:

1887թ.-ին Վարշավայում բժիշկ Լյուդովիկ Չամենհոֆը հրատարակեց «Միջազգային լեզու» գիրքը՝ ստորագրված

«Դոկտոր Էսպերանտո» կեղծանունով: Էսպերանտո թարգմանաբար նշանակում է «հուսացող»: Միջազգային ծրագրային լեզուն նախատեսված է ոչ թե փոխարինելու ազգային լեզուներին, այլ ծառայելու որպես օժանդակ երկրորդ լեզու ամբողջ մարդկության համար: Չամենհոֆը առաջինն էր, ով հասկացավ, որ այդպիսի լեզուն կարող է լիարժեք զարգանալ միայն միջազգային մասշտաբով՝ բազմակողմանի օգտագործման դեպքում: Ուստի առաջարկել է ոչ պատրաստի լեզու, այլ դրա հիմնական քերականական սկզբունքները, ոչ մեծ բառարան ու տեքստերի նմուշներ՝ սկիզբ դնելով լեզվի ստեղծագործական զարգացման հնարավորություններին: Դրա շնորհիվ Էսպերանտոն ծրագրայինից վերածվել է հարուստ արտահայտչամիջոցներով խոսակցական և գրավոր լիարժեք լեզվի, որը լայնորեն կիրառվում է ամբողջ աշխարհում: Չամենհոֆը կանխագործել է կառուցվածքային լեզվաբանության հիմնադիր Ֆերդինանդ դե Մոսյուրի մի քանի մտահղացումները (վերջինիս եղբայր Ռենեն եղել է եռանդուն Էսպերանտոստիստ):

Կառուցվածքը: Էսպերանտոն զեղեցիկ և բարեհունչ լեզու է, որը հիշեցնում է իտալերեն և իսպաներեն լեզուները: Քերականությունը կազմված է 16 կանոններից, այբուբենը լատինագիր է և պարունակում է 28 տառ-հնչյուն: Բառերն ընթերցվում են այնպես, ինչպես գրվում են, շեշտը դրվում է նախավերջին վանկի վրա: Էսպերանտոյի բառապաշարը հիմնվում է արևմտաեվրոպական բառապաշարի վրա, սակայն նրա շարահյուսության և ձևաբանության կազմավորման վրա մեծ ազդեցություն են գործել սլավոնական լեզուները: Ձևային անփոփոխությամբ Էսպերանտոն որոշ չափով նմանվում է չինարենին, իսկ բառի ներքին կառուցվածքով մոտ է կցական լեզուներին, ինչպիսիք են թուրքերենը, ճապոներենը և սվահիլին (աֆրիկյան լեզուներից մեկը):

Զարգացումը: Ամենավաղ փուլում լեզուն կազմված էր մոտավորապես 1000 արմատից, որոնցից հնարավոր էր կազմել 10000-12000 բառ: Իսկ ժամանակակից բառարանները պարունակում են 15000-20000 արմատ, որոնցից կարելի է կազմել հարյուրհազարավոր բառեր: Լեզուն շարունակում է զարգանալ գրականության և միջազգային գրավոր ու բանավոր շփումների միջոցով: Էսպերանտոյի ակադեմիան վերահսկում է լեզվի զարգացումը և վավերացնում է առավել հաջող նորամուծությունները: Ժամանակի ընթացքում Էսպերանտոն գործնականում օգտագործվել է բոլոր հնարավոր նպատակներով, նաև բանավեճային ու խնդրահարույց դեպքերում: Այս լեզուն մեկ անգամ չէ, որ արգելվել է տարբեր երկրներում, իսկ Էսպերանտոստները հետապնդվել և պատժվել են ինչպես Մոսկվայի կողմից, որը Էսպերանտոն համարում էր «աշխարհաքաղաքացիների» լեզու, այնպես էլ՝ Հիտլերի կողմից: Վերջինս, Էսպերանտոն համարում էր համայն աշխարհի հրեաների լեզու (Չամենհոֆը լեզվի ստեղծողը, եղել է հրեա. նա իրեն համարում էր ռուսական

հրեա): Էսպերանտոն ընտանիքներում կիրառելու հետևանքով այժմ կան մոտավորապես 1000 էսպերանտիստներ, որոնք ի ծնե խոսում են այդ լեզվով:

Կիրառողները: Էսպերանտիստների ամենազանգվածային կազմակերպությունը՝ UEA-ն (Universala Esperanto-Asocio-Միջազգային Էսպերանտո Միություն), իր մեջ ներառում է 70 երկրների միություններ և հազարավոր անհատական էսպերանտիստներ 120 երկրներից: Ըստ վաճառված գրքերի և էսպերանտական կազմակերպությունների վիճակագրական տվյալների՝ էսպերանտիստների քանակը հասնում է մինչև մի քանի միլիոնի: Էսպերանտոյով խոսում են ամբողջ աշխարհում, ընդ որում նշանակալից թվով էսպերանտիստներ կան Ճապոնիայում, Չինաստանում, Բրազիլիայում, Իրանում, Մադագասկարում, Հունգարիայում, Կոլումբիայում, Տոգոյում և այլ երկրներում:

Ուսուցումը: Էսպերանտոյով հաղորդակցումը շատ արագ է տեղի ունենում: Մեկ ամիս ուսումնասիրելուց հետո էսպերանտոն կարելի է օգտագործել նամակագրության մեջ, ևս մի քանի ամիս հետո՝ արտասահմանում շփումների դեպքում: Փորձերը և ոչ պաշտոնական դիտարկումները ցույց են տվել, որ էսպերանտոյի նախնական ուսուցումը (մայրենիից հետո) դյուրացնում է հետագայում օտար այլ լեզուների յուրացումը: Չնայած էսպերանտոյի մասնավարժական մեծ ներուժակ արդյունավետությանը ոչ հաճախ է այն ներառվում ազգային կրթական ծրագրերում: Մեծ մասամբ սովորում են ինքնուս եղանակով, էսպերանտական ակումբներում և հեռակա կամ համացանցով՝ www.lernu.net, որը առաջարկում է դասընթացներ ավելի քան 30 լեզվով: Ինքնուսուցյց նյութեր և դասագրքեր են հրատարակված ավելի քան 100 լեզվով՝ www.edukado.net կայքը տեղեկացնում է էսպերանտոյի դասընթացների ժամանակակից գործունեության մասին:

Պաշտոնական ճանաչումը: 1954թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր Խորհրդաժողովը ընդունել է, որ էսպերանտոյի ձեռք բերած նվաճումները միջազգային մտավոր փոխանակումների գործում համապատասխանում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի նպատակներին, գաղափարներին, և շուտով ՅՈՒՆԵՍԿՕ-ի ու UEA-ի միջև հաստատվում են խորհրդակցական կապեր: Համգործակցումն այս կազմակերպությունների միջև գնալով զարգանում է: 1985թ.-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ն առաջարկությամբ դիմել է իր կազմի մեջ մտնող երկրներին և միջազգային կազմակերպություններին՝ էսպերանտոյի ուսուցումը մտցնելու դպրոցական ծրագրերում և լեզուն օգտագործելու միջազգային համագործակցություններում: UEA-ն պաշտոնական կապեր ունի նաև ՄԱԿ-ի, ՄԱԿ-ի Սանկական Ֆոնդի (Unicef), Եվրախորհրդի, Միացյալ Նահանգների կազմակերպությունների և Միջազգային Ստանդարտացում (չափորոշացում) կազմակերպության հետ:

Ժողովներ և ճամփորդություններ: Ավելի քան 100 միջազգային խորհրդաժողովներ և ժողովներ են տեղի ունենում էսպերանտո լեզվով առանց թարգմանիչների և մեկնաբանների: Աշխարհագրական մասշտաբով և կարևորությամբ աչքի է ընկնում Միջազգային Էսպերանտո Վեհաժողովը, որը վերջին տարիներին կայացել է Վիլնյուս (2005), Ֆլորենցիա (2006), Յոկոհամա (2007) , Ռոտերդամ (2008), Բելգետոկ (2009), Հավանա (2010) քաղաքներում, իսկ հաջորդ վեհաժողովները տեղի կունենան Կոպենհագենում (2011) և Հանոյում (2012): Բացի միջազգային համաժողովներից պարբերաբար համաժողովներ են կազմակերպվում ըստ մայրցամաքների և երկրների, տեղի են ունենում նաև բազմաթիվ տարածաշրջանային և տեղական հանդիպումներ, որոնց սովորաբար մասնակցում են տարբեր երկրների էսպերանտիստներ: UEA-ի երիտասարդական բաժանմունքի կողմից հրատարակվող «Pasporta Servo» ամենամյա տեղեկագիրքը պարունակում է ավելի քան 1225 անձանց հասցեներ, որոնք էսպերանտիստ-ճանապարհորդներին տրամադրում են անվճար օթևան:

Համալսարաններ ու գրադարաններ: Որոշ համալսարաններ էսպերանտոն ներառում են լեզվաբանությանը վերաբերող դասընթացներում, որոշներն էլ առաջարկում են ուսումնասիրել այն որպես ուսումնական անկախ նյութ: Հիշատակման է արժանի Պոզնանի Ա.Միցկևիչի անվան համալսարանը (Լեհաստան), որտեղ կարելի է ստանալ էսպերանտոլոգիայի և միջլեզվաբանության բնագավառների դիպլոմներ: Ամերիկյան ժամանակակից լեզուների միության մատենագիտական տարեգիրքը ամեն տարի գրանցում է ոչ պակաս քան 300 գիտական հոդված էսպերանտոյի մասին: Էսպերանտո գրականության մեծ հավաքածուներ կան Ավստրիայի Ազգային գրադարանի մաս կազմող Վիեննայի միջազգային էսպերանտո թանգարանի գրադարանում (35.000 գիրք): Ավելի քան 20.000 գիրք կա UEA-ի Հոդլերի անվան գրադարանում (Ռոտերդամ), Բրիտանիայի էսպերանտո միության, Գերմանիայի Ալեն քաղաքի, Ճապոնիայի Էսպերանտո Բնաստիտուտի (Տոկիո) գրադարաններում : Վիեննայի և Ալենի գրադարանների հետ կարելի է խորհրդակցել համացանցով և ստանալ գրքեր միջազգային միջգրադարանային բաժանորդագրությամբ (արձեմենտով):

Շփումներ՝ ըստ մասնագիտությունների և հետաքրքրությունների: Գոյություն ունեն էսպերանտերեն խոսողների բազմազան կազմակերպություններ, որոնցից են բժիշկների, գրողների, գիտնականների, երաժիշտների, երկաթուղայինների և այլ բնագավառների կազմակերպություններ, որոնք հրատարակում են սեփական ամսագրերը, կազմակերպում խորհրդաժողովներ և զարգացնում լեզուն ըստ մասնագիտությունների կամ բնագավառների: Ման-Մարիոյի Գիտությունների Միջազգային Ակադեմիան և տարբեր երկրներում գործող նրա ճյուղերը ձգտում են էսպերանտոյի միջոցով հեշտացել միջազգային և միջճյուղային համագործակցում համալսարանական մակարդակով: Էսպերանտոյով պարբերաբար հրատարակվում են ինչպես թարգմանչական, այնպես էլ բնագիր գրքեր աստղագիտության, կիբեռնետիկայի, բուսաբանության, բժշկության, փիլիսոփայության, քիմիայի, իրավաբանության և համակարգչային ծրագրերի վերաբերյալ: 2009թ. UEA-ն էսպերանտերեն հրատարակել է Դարվինի տեսակների ծագման գիտական դասակարգման շարքը՝ «Գիտական Միաք» վերնագրով: Էսպերանտիստները միավորվում են ոչ միայն ըստ մասնագիտությունների, այլև ըստ հետաքրքրությունների՝ սկաուտներ, զբոսաշրջիկներ, շախմատիստներ, գո խաղացողներ, հաշմանդամներ և այլք, որոնք ունեն իրենց համապատասխան կազմակերպությունները: UEA -ի երիտասարդական բաժանմունքը հաճախ կազմակերպում է միջազգային համաժողովներ ու հրատարակում սեփական ամսագրերը և այլ պարբերականները: Բուդապեշտիները, կաթոլիկները, բողոքականները, մորմոնները, բահաները և այլեիստները ևս ունեն իրենց կազմակերպությունները: Բազմաթիվ ուղղություններով գործող հասարակական խմբավորումներ էսպերանտոն ակտիվորեն օգտագործում են իրենց կողմից իրականացվող միջոցառումներում և միջազգային շփումներում: «Առանց ազգության միջազգային միություն»-ում համագործակցում են զանազան աշխատանքային գաղափարամետներ:

Գրականություն: Էսպերանտո լեզվով ծաղկող գրական ավանդույթը ճանաչում է ստացել միջազգային ՊԵՆ-ակումբի կողմից, որի կազմի մեջ 1993 թ.-ին ՊԵՆ-ի 60-րդ կոնգրեսում պաշտոնապես մտել է էսպերանտական ՊԵՆ կենտրոնը: Էսպերանտոյով ստեղծագործելուն խթանում է էսպերանտոյի Գրական Ակադեմիան, որը հիմնադրվել է 2008թ-ին:

Էսպերանտոյով ստեղծագործող ներկայիս հայտնի գրողներից են վիպասաններ Տրևոր Մտիլիլը (Ավստրալիա), Իշովան Նեմերը (Հունգարիա), Մպոմենկա Շտիմեցը (Խորվաթիա), Մանուել դե Սեպրան (Կատալոնիա) և բանաստեղծներ Մաուրո Նևրին (Իտալիա), Մաո Ջիֆուն (Չինաստան), Միքայել Հիշպլինգը (Բարայել) ու Աբել Մոնտագուտը (Կատալոնիա), ակնարկագիրներ (Էսսեիստներ) և թարգմանիչներ Պրոբալ Դասգուպտան (Հնդկաստան) և Համֆրի Տոնկինը (ԱՄՆ) : Էսպերանտո-բանաստեղծներից են՝ Վիլյամ Աուլըր, Մարյորի Բոուլթոնը և Բալդուր Ռագնարսոնը, ովքեր եղել են գրականության Նոբելյան մրցանակի թեկնածուներ:

Թարգմանություններ: Վերջին ժամանակներս կատարված բազմաթիվ թարգմանություններից աչքի են ընկնում Շեքսպիրի «Ձմեռային հեքիաթը», Մանգոնիի «Փեսացուն և հարսնացուն», Տոլկինի «Օդակների տիրակալը», Գարսիա Մարկեսի « Հարյուր տարվա մենությունը», Հեմինգուեյի «Օերունին և ծովը», Բուլգակովի «Վարպետն ու Մարգարիտան», Ցաո Սյուեցինյայի «Քուն կարմիր վերնատանը», Գրասի «Թիթեյա թմբուկը», Յարուլավ Հաշեկի «Քաջ զինվոր Շվեյկի արկածները», Վու Չենգենի չինական դասական վեպը՝ «Ուխտավորը դեպի արևմուտք»: Տարբեր լեզուներից թարգմանվել են նաև բազմաթիվ հատընտիրներ: Էսպերանտոյով թարգմանված են մանկական գրքեր Աստերկայի, Ալիսայի, Վիննի-Պուխի, Երկարագուլպա Պեպիի և այլոց մասին: Նկատի առնենք, որ տպագրվում են նաև թարգմանություններ Էսպերանտերենից: Օրինակ՝ Թիվադոր Սորոսի (հայտնի ֆինանսիստ Ջորջ Սորոսի հայր) 1965թ. Էսպերանտոյով գրված «Դիմակահանդես»-ը թարգմանվել է անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, հունգարերեն և թուրքերեն: Այն պատմում է ֆաշիստների կողմից Բուդապեշտը զավթելու ընթացքում իր ընտանիքի կրած փորձությունների մասին: Լեհ լրագրող Ռոման Դոբրզինսկու «Ջամենհոֆի փողոց» գիրքը թարգմանվել է տպագրվել է 12 լեզուներով:

Թատրոն և կինո: Էսպերանտոյով բեմադրվել են Գոլդոնիի, Իոնեսկոյի, Ալան Այկբարնի, Շեքսպիրի պիեսները: 2001թ. դեկտեմբերին Վիետնամի մայրաքաղաք Հանոյում ներկայացվել է Շեքսպիրի «Լիր արքա» դրաման՝ տեղի դերասանների ուժերով: Էսպերանտոն կինոյում ավելի քիչ է օգտագործված: Դեռևս Չապլինի «Մեծ դիկտատորը» ֆիլմում եղել են դրվագներ, որտեղ ցուցադրվել են Էսպերանտերեն ազդագրեր: Ճապոնական «Ցան Արիմա» ֆիլմում որոշ երկխոսություններ եղել են Էսպերանտոյով, իսկ Լեալի Ստիվենսի պաշտամունքային «Բնկուր» ֆիլմում բոլոր երկխոսությունները արվել են միայն Էսպերանտոյով:

Երաժշտություն: Էսպերանտոյում ներառված երաժշտական ժանրերից են ժողովրդական և այլ հանրահայտ երգերը, ռոքը, էստրադան, մեներգերը , խմբերգերը և նույնիսկ օպերան: Հանրաճանաչ երգահաններից և կատարողներից Էլվիս Կոստելլոն և Մայքլ Ջեքսոնը, ոգեշնչված Էսպերանտո լեզվով, թողարկել են ձայնասկավառակներ, գրել են նվագախմբային ստեղծագործություններ, որոնք նաև օգտագործել են տեսաֆիլմերում: 1996թ. թողարկված «Էսպերանտո» ալբոմի մի քանի երգեր բարձր տեղ են գրավել իսպանական հանրահայտ երգերի ցանկերում: Ամերիկացիներ Լուի Հարիսոնի «La Koro Suro» -ն և Դավիդ Գեյնսի 1-ին սիմֆոնիան պարունակում են դասական նվագախմբային և երգչախմբային ստեղծագործություններ Էսպերանտո տեքստով: 2000թ.-ին ֆրանսիական «Վիլնիկոսմո» ստուդիան թողարկել է Էսպերանտերեն երգող ժամանակակից առավել հանրաճանաչ երգիչների և երգչախմբերի 10 ձայնասկավառակներ: Էսպերանտերեն երգեր կարելի է գտնել նաև համացանցում:

Պարբերականներ: Ավելի քան 100 ամսագրեր և թերթեր են հրատարակվում Էսպերանտոյով, ներառյալ հասարակական-քաղաքական «Մոնատո» (Բելգիա), UEA-ի «Էսպերանտո» պաշտոնական և երիտասարդական «Կոնտակտո» ամսագրերը: Շատ ամսագրեր ունեն էլեկտրոնային տարբերակներ և նաև արխիվներ համացանցում: Հրատարակվում են ակադեմիական, բժշկական, կրոնական, մասնագիտական, գրական, երիտասարդական ամսագրեր:

Ռադիո և հեռուստատեսություն: Բրազիլիայի, Չինաստանի, Կուբայի, Լեհաստանի և Վատիկանի ռադիոկայանները կանոնավորապես հաղորդում են հեռարձակում Էսպերանտոյով: Գնալով ավելի են շատանում համացանցով լսելի Էսպերանտիստական ծրագրերը: Բի-Բի-Սի-ի արտոնագրով թողարկված «Մագին Գոնդոլենդի մեջ» հայտնի լեզվաբանական դասընթացի Էսպերանտո տարբերակը հեռարձակվել է շատ երկրների հեռուստաալիքներով: Լեհաստանի Բելլեստոկ քաղաքի Էսպերանտո TV-ն կանոնավորապես հեռարձակում է Էսպերանտերեն ծրագրեր:

Համացանց: Համացանցում Էսպերանտոյի օգտագործումը շատ աշխույժ և արագ զարգացող բնույթ է կրում: Գոյություն ունեն քննարկումների հարյուրավոր կայքեր, որոնք շոշափում են բազմաթիվ թեմաներ՝ սկսած ընտանիքում Էսպերանտո լեզվի օգտագործումից մինչև հարաբերականության տեսություն: Էսպերանտոն լայնորեն օգտագործվում է ակնթարթային հաղորդակցությունների համակարգում՝ ICQ, IRC, MSM, Skype: Էսպերանտոյով ստեղծվել են այնպիսի համակարգչային ծրագրեր, ինչպիսիք են՝ ուղղագրական, քերականական սրբագրիչները և ստեղծաշարի դասավորումը: Open office, Firefox, Irfan View, KDE գրաֆիկական պատկերների մշակումը, ինչպես նաև Ubuntu և Mandriva գործադրող (օպերացիոն) համակարգերը ունեն Էսպերանտո տարբերակներ: Google, Wikipedia, Facebook և Ipernity հանրահայտ կայքերը ունեն նաև Էսպերանտո տարբերակը:

UEA - ի ծառայությունները: UEA - ն լույս է ընծայում գրքեր, ամսագրեր և տարեգիրք, որը ներառում է Էսպերանտո կազմակերպությունների և ավելի քան 100 երկրների տեղական ներկայացուցիչների հասցեացուցակները: Այդ հրատարակչությունների, ձայնասկավառակների, թվային տեսակավառակների և այլնի մասին տեղեկատվությունները կարող եք գտնել www.uea.org/katalogo կայքում: UEA -ի «Գրքի ծառայությունը» պարունակում է մոտավորապես 5000 անուն գրականություն:

Էսպերանտոյի մասին լրացուցիչ տվյալներ կարելի է ստանալ՝ կապվելով UEA - ի հետ՝ Nieuwe Binnenweg 176, NL-3015 BJ Rotterdam, Nederlando, հեռ.՝ +31-10-4361044; ֆաքս՝ 4361751; uea@co.uea.org կամ 777 United Nations Plaza , New York , NY 10017 , Usono (հեռ. + 1-212-687-7041; ֆաքս՝ 949-4177) կամ <http://www.uea.org> կամ Abovjan 3, 0001 Yerevan, Armenio, Tel: +374 10 26 48 73 , +374 93 895 105, retpošto: esperanto@area.am www.area.am